

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

«Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ

Ք. ՄԱՐԳԱՐՅԱՆ

, 2022թ.



ՔԱՂՎԱՑՔ

ԲՊՀ Անգլերենի ամբիոնի, Լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի և Ասիական լեզուների գիտաուսումնական կենտրոնի՝ 2022թ. նոյեմբերի 25-ին կայացած հ. 7 (համատեղ) նիստի արձանագրությունից:

Նիստին մասնակցում էին Անգլերենի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Գ. Եղիազարյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Ալավերդյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Կարապետյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Մինասյանը, բ.գ.թ., դոցենտ Ռ. Գևորգյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Բարսեղյանը, Լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Լ. Բադալյանը, Ասիական լեզուների գիտաուսումնական կենտրոնի ղեկավար, բ.գ.թ., դոցենտ Բ. Ռաֆայելովան, թուրքերենի դասախոս, պ.գ.թ. Մելինե Անումյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝ Շուշանիկ Իշխանի Զաքարյանի «ԲԱՅԻ ՍԵՈՒ ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ, ՀԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԵՐԵՆՈՒՄ (ՀԱՅԵՐԵՆԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ) » Ժ.02.02- «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման արեւմտախոսության քննարկումը:

ԼՍԵՑԻՆ՝ Շուշանիկ Իշխանի Զաքարյանի «Բայի սեռի ձևաբանական, շարահյուսական և իմաստային յուրահատկությունները ժամանակակից թուրքերենում (հայերենի զուգադրությամբ) *ատենախոսությունը հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը:*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Եղիազարյանը, ք.գ.թ., դոցենտ Ա. Ալավերդյանը, ք.գ.թ., դոցենտ Ա. Կարապետյանը, պ.գ.թ. Մելինե Անումյանը և այլք:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Շուշանիկ Զաքարյանի ատենախոսությունը վերաբերում է ժամանակակից թուրքերենում բայի սեռի առանձնահատկություններին՝ հայերենի զուգադրությամբ: Բայի սեռի հանդեպ գիտական հետաքրքրությունը պայմանավորված է այն փաստով, որ այն այլևս զուտ քերականական իմաստ չի կրում, այլ փոխանցում է հաղորդակցական այնպիսի երանգներ, որոնք լեզվական քաղաքավարությանը բնորոշ հատկություններ ունեն: Ուստի այս բայական կարգը իր ուրույն տեղն է գրավում իմաստաբանության և գործաբանության հայեցակարգերում և ուսումնասիրության առարկա է դառնում անձի հուզական դրսևորումները դիտարկելիս՝ լեզվական գործիքների կիրառմամբ:

Ներկա ատենախոսության թեման հետաքրքրական և **արդիական** է ժամանակակից լեզվաբանական ուսումնասիրությունների համատեքստում՝ թուրքերենի բայի սեռի կարգի մանրամասն մեկնաբանության և համարժեք թարգմանություններ կատարելու առումով: Ատենախոսության **նպատակն է** ցույց տալ թուրքերենի բայի սեռի ձևաբանական, բառակազմական տարանջատման սահմանները, բնութագրել բայական անդրադարձության և ոչ անդրադարձության առանձնահատկությունները, քննել բայի սեռի ձևաբանական, իմաստային և կիրառական օրինաչափությունները: Աշխատանքում ներկայացված է նաև թուրքերենի և հայերենի բայասեռի

ձևաբանական, իմաստակառուցվածքային և գործառական ընդհանրություններն ու տարբերությունները:

Աշխատանքի **գիտական նորոյթն** այն է, որ հայ իրականության մեջ առաջին անգամ փորձ է արվում համապարփակ ուսումնասիրության ենթարկել ժամանակակից թուրքերենի բայի սեռի կարգը՝ հիմք ընդունելով թուրք, արևմտյան, ռուսաստանյան և հայ թուրքագետ-լեզվաբանների տեսակետներն ու կարծիքները: Նոր է և հետաքրքիր նաև զուգադրական մեթոդի կիրառմամբ տվյալ բայական կարգի համեմատությունը թուրքերենի և հայերենի միջև:

Աշխատանքի **գործնական նշանակությունը** պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են կիրառվել տեսական քերականության դասընթացներում, ինչպես նաև կիրառություն գտնել թուրքագիտական տարբեր հետազոտություններում, դասագրքերում, ուսումնամեթոդական ձեռնարկներում: Ստացված արդյունքները կարող են նաև օգտագործվել թուրքերենից հայերեն և հայերենից թուրքերեն թարգմանություններում:

Ատենախոսությունը ներկայացված է հետևյալ կառուցվածքով՝ ներածություն, հինգ գլուխ (իրենց ենթագլուխներով), եզրակացություն, գրականության ցանկ:

Ներածությունում հիմնավորվում է ուսումնասիրության առարկան, թեմայի արդիականությունը, նորոյթը, նպատակը, խնդիրները, տեսական ու գործնական նշանակությունը, նախանշվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Առաջին գլխում որոշարկվում է ժամանակակից թուրքերենի բայի ընդհանուր բնութագիրը և դիտարկվում թուրքերենի՝ բայի սեռի կարգի վերաբերյալ սահմանումները: Քննության են ենթարկվել թուրքերենի բայական անցողականությունը և անանցողականությունը՝ հայերենի զուգադրությամբ:

Երկրորդ գլուխը նվիրված է սեռի, նրա տրամաբանական և քերականական ակտանտների միջև եղած փոխհարաբերությանը:

Երրորդ գլխում քննության են ենթարկվել թուրքերենի կրավորական սեռի կազմության հիմնական օրինաչափությունները և սահմանումները:

Չորրորդ գլխում փորձ է արվել քննել թուրքերենի անդրադարձ և փոխադարձ սեռերը:

Հինգերորդ գլխում վերլուծության են ենթարկվել թուրքերենի պատճառական սեռի ձևաբանական և շարահյուսական դրսևորումները, իմաստային նրբերանգները:

Եզրակացության մեջ ամփոփվել են աշխատանքի հիմնական արդյունքները, համակարգվել և ձևակերպվել են կարևորագույն դրույթները: Միանգամայն արդարացված է ատենախոսի այն եզրահանգումը, որ ժամանակակից թուրքերենի բայասեռի համակարգն իր ձևաբանական, շարահյուսական առանձնահատկություններով հանդես է բերում կերպավիճակային զանազան իմաստներ:

Չափազանց դրվատելի է ատենախոսի կողմից առարկայի վերաբերյալ արտահայտած բազմազան տեսակետների ներկայացումը: Ատենախոսության դրական կողմերից է այն իրողությունը, որ այստեղ անկհայտ է ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ ատենախոսի քաջատեղյակությունը: Մանրակրկիտ վերլուծություն է իրականացված ժամանակակից թուրքերենի բայի սեռի տեսակների և արտահայտման ձևերի մասին: Աշխատանքը տեղեկատվական պատմական էքսկուրս է տվյալ բայական կարգի ձևավորման գործընթացի վերաբերյալ, ինչը և ի հայտ է բերում ժամանակակից թուրքերենի բայի սեռի կարգի առանձնահատկությունները: Հատկանշական է նաև ատենախոսության զուգադրական վերլուծությունը՝ թուրքերենի և հայերենի համարժեքությունը ներկայացնելու առումով:

Այնուամենայնիվ, **Շուշանիկ Զաքարյանի** ատենախոսությունն առավել կատարյալ տեսնելու ցանկությունից ելնելով է, որ հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում և առաջարկ, որոնք, կարծում ենք, ատենախոսը կարող է շահեկանորեն հաշվի առնել հետագա գիտական գործունեության ընթացքում:

1. Կարծում ենք, աշխատանքի ներածության մեջ տեղ գտած լեզվաբանների այդ քանակի տեսակետների մանրամասն ներկայացումը ավելի դիտարկելի կլիներ առաջին գլխում:

2. Աշխատանքի էջ 43-ում նշված է, որ անցողականության և անանցողականության որոշումը կատարվում է անկախ նրանից, թե բայերն ուրիշ հոլովներով արտահայտվող այլ խնդիրներ ընդունում են, թե ոչ, և որ անցողական շատ բայեր, չունենալով հայցական հոլովով դրված ուղիղ խնդիր պահանջելու և ընդունելու հատկություն, կարող են պահանջել այլ հոլովներով դրված խնդիրներ: Այստեղ հարց է ծագում, արդյո՞ք նման բայերը, այնուամենայնիվ պահանջելով խնդիր, կրավորական սեռով կամ պատճառական կառույցներով երբևէ չեն արտահայտվում, և այլ հոլովներով դրված խնդիրներն ինչպիսի գործառույթ ունեն այս դեպքում:

3. Աշխատանքում, տեղ են գտել որոշ վրիպակներ, այն է՝ 43-րդ էջի վերջին պարբերության մեջ բերված թուրքերեն օրինակում “uğraşmak”ի փոխարեն պետք է լինի “uğramak”: Էջ 63-ում Bu kitap sizce okunmuştur-ում պետք է լինի՝ Bu kitap sizin tarafınızdan okunmuştur: 64-րդ էջում ներկայացված Sigarasini yakarken sokak kapisi çalindi թուրքերեն նախադասության մեջ անցյալ կատարյալով դրված ստորոգրյալը հայերենում թարգմանվել է ներկա շարունակական ժամանակձևով: Էջ 70-ում Altun ovasinin çiçekleri gecenin meltemiyle hafifca sallaniliyordu- hafifca պետք է լինի hafifçe, sallaniliyordu-ը՝ sallaniyordu: Էջ 89-ում Konuştuklari sözlere hatirladi նախադասության մեջ sözler գոյականը պետք է դրվի հայցական հոլովով (sözleri), այնինչ գրված է տրականով՝ sözlere և այլն:

4. Եվ մի առաջարկ՝ աշխատանքն առավել կշահի, եթե իմաստաբանական վերլուծության հետ զուգընթաց դիտարկվի ժամանակակից թուրքերենի բայի սեռի կարգի գործաբանական մակարդակը, օրինակ, լեզվական քաղաքավարության տեսակետից և այնուհետև զուգադրվի հայերենի հետ:

Ամփոփելով նշենք, որ ատենախոսը հաջողությամբ իրականացրել է իր առջև դրված խնդիրների լուծումը: Նշված բացթողումները հայեցակարգային չեն և ամենևին չեն ստվերում աշխատանքի գիտական որակն ու կարևորությունը: Այն առանձնանում է տեսական և գործնական նյութի գերազանց վերլուծությամբ, կուռ և համապարփակ շարադրանքով, հարցադրումների հստակ պարզաբանումներով և գիտական պատշաճ ոճով: Ատենախոսության սեղմագիրը և ատենախոսի հրատարակած հոդվածները լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթներն ու բովանդակությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Շուշանիկ Իշխանի Զաքարյանի «ԲԱՅԻ ՍԵՌԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ, ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԵՐԵՆՈՒՄ (ՀԱՅԵՐԵՆԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ) » Ժ.02.02- «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացված պահանջներին, ինչն էլ հիմք է տալիս մեզ միջնորդել ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի առջև՝ շնորհելու **Շուշանիկ Իշխանի Զաքարյանին՝ իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:**

ԲՊՀ անգլերենի ամբիոնի վարիչ՝  Բ.գ.դ., պրոֆեսոր Գ. Եղիազարյան
Նիստի քարտուղար՝  Ա. Ավետիսյան

Հաստատում եմ Գ. Եղիազարյանի ստորագրությունը
ԲՊՀ գիտական քարտուղար՝  Հ. Փիլավջյան

